ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 13

ՏԱՐԵԿԱՆ
ԳՐԱՆՈՐԴԱԳԻՆՆԷ

Թուրքիա . . . . . 14 ղուռուշ
Գերմանիա . . . . . 20 ղուռուշ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 բբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 ղուռուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանկ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 5 շահի
Զորրորդ „ „ „ 3 „

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ։
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու։
3. Մենք մերժում ենք „ու“ ի և „վ“ ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տալ մեր ընդունած ուղղագրութեամբ։
4. Չտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնւում։ Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։
5. Զի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը։
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն վերծ է համարում պատասխանատուութիւնից։
7. Չտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 ղուռուշ 10 շահի։

№ 14 1912 Թ. ՇԱԲԱԹ 2 ՅՈՒՆԻՍԻ 1912 Թ. № 14

ԴԷՊԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԴԷՊԻ ՇԻՆԱՐԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Ղալա թաղի Արամեան և Ս. Աննայեան երկսեռ դպրոցների համար պահանջւում է նոր հոգաբարձական մարմնի ընտրութիւն, որովհետև հնի երեքամեայ շրջանը լրանալու վրայ է։

Նշանակում թէ Ղալայի ծխականներդ խիստ կարևոր, պատասխանատու և սրբազան գործի առաջ էք կանգնած։

Սրբազան գործի հանդէպ պահանջւում կշռադատուած, գիտակից և արթուն վերաբերմունք։ Հասարակական խնդիրներում միշտ գործը վերջանում է լացով, դժգոհութեամբ և կործանումով, երբ ինքը հասարակութիւնը Պիղատոսի նման ձեռքը լուանալով՝ քաշւում է ասպարիզից։ Երբ հասարակութիւնն իր դերի ու պարտականութեան մէջ չէ լինում, առթից օգտւում են ճարպիկներն ու պատրաստի դրամից օգտուողները և հաւաքելով 10-20 հոգի պատանիներ, կամլաւ «դաս առած» վարժ տղերք՝ յանուն հասարակութեան csապով «ընտրութիւն» են կատարում և ապա անարժաններով լցնում գիտութեան տաճարները, որոնց բարոյական ողբալի պատկերը մեր աչքի առաջն է։

Որպէս զի Ղալայի դպրոցներն ևս այդ ողբալի վիճակին չենթարկուեն, պէտքէ որ Ղալայի ծխականները լինեն արթուն, գիտակից և ասպարէզը չթողնեն մի քանի անչափահասների, որոնք ոչ հարազատներ ունեն դպրոցում, ոչ դրպրոցի ծանրութիւնն են կրում իրենց ուսին և ոչ էլ կխղճահարուեն երբ դպրոցի դրամները վատնուեն, որովհետև ոչ մի աշխատանք ու քրտինք չեն թափել կոպէկ-կոպէկ հաւաքած ազգային այդ դիւրամարս գումարների վրայ։

Հէնց մեր հասարակական անտարբերութիւն է պատճառ, որ հակառակ մեր թեմի արժանապատուութեան, ունինք մի խարխուլ առաջնորդական, շէնք չունինք թեմ. ժողով, ունինք պակասակազմ և անկանոն նիստերով թեմ. խորհուրդ, ունենք դպրոցներ իսպառ սնանկ և պարտքերով ծանրաբեռնուած և դեռ սնանկացնողներին էլի վերակոչում ենք պատասխանատու պաշտօնների։

Ինչ կատարուել է անցեալում, թող այլևս չկրկնուի այժմ։

Սովորական դառած մեր քար անտարբերութիւնը, ուսերը թափ տալն ու «ինձ ի՞նչ» ասելը, «ում կուզեն թող ընտրեն» պատասխանելը և հեռու փախչելը, պէտք է այս անգամ մի կողմ թողնել, Ղալայի ծխականներ։

Մէջտեղում դրուած է ձեր (Ղալացոց) զաւակների ուսման, բարոյական ու հոգևոր դաստիարակութեան վսեմ գործի ղեկավարութեան հարցը։

Արդ՝ ի՞նչ աւելի թանկագին և գուրգուրանքի արժանի գործ, քան եթէ մանուկ սերնդի, ձեր թանկագին որդոց առողջ դաստիարակութեան ապահովումը և դպրոցի հոգատարութիւնը բարեխիղճ, արժանաւոր, հեղինակաւոր և ոչ-քայքայական մարդոց ձեռքում։

Եթէ միայն այսքանը դուք կարողանաք անել, դա մի մեծ շինարար աշխատանք կլինի, որի բարեբար արդիւնքը կվայելէք դուք և ձեր սանները։

Իսկ այդ արած լինելու համար՝ անհրաժեշտ է գործ և կողմնակի պարապմունքներ մի կողմ թողած՝ դաք ընտրական ժողովների, ընտրելու գործունեայ, արժանաւոր, հեղինակաւոր եւ ոչ- քայքայական մարդոց իբրև հոգաբարձուներ, որոնք իրենց պէտք է ամենից առաջ ժողովրդի ընտրեալները համարեն և ոչ թէ «հաւատարմատարներ», որոնք կոչուած են որոշ մի խմբակի մարդոց կամ «ընկերների» քսակն ու ստամոքսը լցնելու ի վնաս ժողովրդի և դպրոցական հաստատութեան։

Տարաբախտաբար վերջին երկու տասնամեակի մեր իրականութիւնը իր յոռի դաստիարակութեամբ մեզ տուեց մի սերունդ, որ ոչնչով պակաս չէ Տուրգենևի Բազարովներից. Նիհիլիստների, աւելի ճիշտն ասած, բրտերեսների [հաստ երեսների) մի հսկայ զանգուած, որ բուսնցը, աղմուկը, սպառնալի՛ն ու ջարդը սկզբունք դարձրած՝ ընտրական ժողովներից փախցրել է միշտ վարկի, դիրքի, փորձառութեան տէր մարդոց և ամենինչ տարիներ շարունակ ճզմել է իր թաթում և սպանել։

Պատկառանքի պակասութիւնը, բրտերեսութիւնը մի կարգ մարդոց կողմից մեզանում համարւում է յայտարար նշան «հասարակական գիտակցութեան.» Դժբախտաբար այդ կարգի հերոսները վաղուց է որ մեզանում առաջնորդողի դեր են խաղում՝ այլասերելով ամենինչ և կործանելով ամենանուիրական հաստատութիւն։

Ահա յարմար ժամ, երբ պէտք է ասպարէզ իջնէք ձեր խորը գիտակցութեամբ՝ ընտրելու ժողովրդի և արժանաւոր մարդոց, որպէս զի այսուհետև ևս յարատևի 61-րդ տարին բոլորող Ղալայի Արամեան դպրոցը։

Եթէ կզլանաք, չէք գայ ընտրութեան, եթէ գործը կթողնէք խորթերի, հակաժողովրդականների և ինքնակոչների, այն ժամանակ ձեր դպրոցներն ևս նոյն սնանկումատնուին, որպէս Լիլաւայի դպրոցները, որոնց ինամակալել են ոչ-ժողովրդի մարդիկ։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԱԼԲԱՆԻԱՅՈՒՄ

Արդէն բաւականին երկար ժամանակ է որ Ալբանիան նորից սկսել է ոտք դնել ամենաջերմ և անխորտակելի յեղափոխական շարժման մէջ։ Այս ապաբախտ երկրի համար տաճկական սահմանադրական կոչուած կառավարութիւնը, որ իւր հպատակ բոլոր քրիստոնեայ իրաւազուրկ ազգերի արդարացի պահանջները ոտքի տակ է տալիս, միանգամայն անտանելի է դարձել։ Ալբանիան որոշել է որ այս անգամ, ամեն տեսակ զոհաբերութիւններով, դուրս գայ տաճկական բռնակալ կառավարութեան դաժան լծի տակից։ Ապստամբութիւնը հետզհետէ ստուարանում է և լուրջ կերպարանք ստանում։ Եւրոպական մամուլը բաւականին մեծ յօդուածներ է նուիրում այս շարժմանը։ Սալոնիկից հեռագրում են գերմանական լրագիրներին. որ Պրիշտին քաղաքի կողմից ընտրուած պատգամաւորը, ալբանացի Հասան բէկը, գինուած բազմաթիւ գումարտակների գլուխն անցած՝ մեծ յաջողութիւն ունի Իպէկի շրջանում։ Հասան բէկը դեռ երկու շաբաթ սրանից առաջ թողեց տաճիկ կառավարութեան իրան յանձնած պաշտօնը, մեծ ու հայրենասիրական եռանդով ընդունեց իւր ալբանացի հայրենակիցների՝ առաջարկութիւնը՝ լինել ընդհանուր ապստամբութեան պարագլուխ։ Ահա այս անձնաւորութիւնն է, որ այս անգամ ղեկավարում է ապստամբութեան գործը։ Նրա անունը Ալբանիայի բոլոր սարերում ու ձորերում հնչում է երգերի մէջ։ Կոնստանտինապօլսից արձակած հրահանգների համաձայն, Սալոնիկից հապճեպ կերպով ուղարկուում են հիւսիսային Ալբանիա խոշոր զօրամասեր։ Շատ տեղերում զօրքը առաջնորդուում է հռչակաւոր հոգևորականների ձեռքով, որոնք Ալբանիա ժամանելուց յետոյ սկսելու են դիմել ամեն տեսակ միջոցների՝ ալբանացիներին համոզելու, որ վայր դնեն իրանց զէնքերը։ Իպէկի շրջանում յայտարարուած է պաշարողական դրութիւն։ Ապստամբած ալբանցիների ընդհանուր թիւը Սալոնիկի տեղեկութիւնների համաձայն առայժմ երեք հազարի է հասնում, որոնց մեծամասնութիւնը գործում է լեռնային վայրերում-հետզհետէ ստուարացնելով իւրեանց շարքերը։ Մահմեդական հոգևորականներից կազմուած հաշտարար յանձնախումբը, որ գնացել էր ապստամբած ալբանացիների պարագլուխների հետ բանակցութիւններ վարելու, վերադարձան Դիակովո քաղաքը՝ առանց բնաւին կատարելու իրանց ստանձնած յանձնարարութիւնը։ Ալբանացիները ծանուցանում են, որ իրանք իսպառ հաւատ չ՛են ընձայում պօլսի կառավարութեանը և շարունակ մատնացոյց են անում այս պարագայի վրայ, որ տաճիկ կառավարութիւնը զուրկ է ուժից՝ զսպելու ապստամբութիւնը և վերացնելու Ալբանիայից տիրապետող անիշխանականութիւնը։ Ալբանացիները սպառնում են, որ կարճ ժամանակից յետոյ իրանք կը տիրապետեն Դիակովո գլխաւոր քաղաքի զինանոցներին։ Այս քաղաքի նահանգապետը գրաւոր կերպով յայտարարել է ալբանացիներին, որ եթէ սրանք շարունակեն իրանց յեղափոխական յամառ շարժումը, ստիպուած կըլինին

ուղարկելու նրանց դէմ քաղաքում գտնուող չորս հետևակ գունդը։ Իսկիւբի նահանգապետը նոյնպէս սպառնացել է ալբանացիներին այսպիսի պաշտօնական յայտարարութեամբ։ Temps լրագրի Թղթակցի հեռագրի համաձայն, Իսկիւբից արդէն ուղարկուել են յեղափոխականների դէմ կռուելու Դիակովի շրջագայքում եօթ հազարանոց հետևակների մի զօրագունդ, 500 հոգուց բաղկացած մի հեծելազօրք, երկու գնդացիր և բաւականին թուով լեռնային ու դաշտային թնդանօթներ։ Տաճիկ զօրքի և ալբանացիների առաջին ընդհարումը տեղի է ունեցել Իպէկի շրջայկայքում։ Այս ընդհանուր շարժման մասնակցում են նաև Ալբանիայի մահմետական ազգաբնակութիւնը և Միրիդիա կոչուած ցեղը, որ յեղափոխական շարժման մէջ մեծ սիրագործութիւն է կատարում Պրիզրին ու Պրիշտին քաղաքների շրջակայքներում՝ ունենալով զօրեղ դիմադրութիւն տաճիկ կանոնաւոր զօրամասերին և հրդեհելով կառավարութեան գինարանները։ Միրիդիտների ասելով՝ այս շարժումը շարունակութիւն է կազմում Ալբանիայում տեղի ունեցած 1910 և 1911 թուականների շարժման։

Լ. Գէորգեանց

ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՇԱՀԱՒԷՏ ԼՈՒՐԵՐ ԵՒ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Աշխարհիս մէջ չկայ մի բան, որ անօգուտ լինի, միայն թէ մարդիկ հարկ է որ մտածեն և գտնեն նրա օգտակարութիւնը։ Եւրոպայում և Ամերիկայում մեծ խնամքով հաւաքում են փողոցներից և հրապարակներից լաթի, աղբի, սիկարների բեկորները, վերջապէս ամեն աւելցուկի փշրանքները և դրանցից նորից չիթեղէն, թղթեղէն և սիկարեղէն ու տեսակ տեսակ առարկաներ շինելով՝ մեր երկրում բոլորովին անպէտք և անօգուտ համարուած և դէն շպրտած այդ բաները ոսկու փողի են վերածում։

Ինչի՞ է հարկաւոր, օրինակի համար, մեզանում մարդկային մազը, ո՞վ ուշադրութիւն է դարձնում այդ կըտրուելուց յետոյ բոլորովին անպէտք համարուած և ոտից կոխան, դարձած բանի վրայ։ Սակայն, լսեցէք, անցեալ տարի Ամերիկացի վաճառականները 180 հազար Անգլիական ոսկու արժողութեամբ մարդկային մազ Չինաստանից արտահանել են. իսկ դրա քանակն է 1,759,833 Լիրա, այսինքն անգլ. ֆունտ։ այդ մազից պատրաստում են կեղծ-ծամեր և շինում են մի տեսակ մազէ լաթ, գօշակներ և բարձեր և այլն և այլն։

Խորհուրդ կըտայինք մեր բոլոր սափրիչներին և վարսավէրներին այսուհետև խնամով հաւաքել և պահել մազի կորունքները, որով ապագային մի լաւ գործ սկսել կարելի է, երբ պահանջը ներկայանայ։ Ոչ մի բան անօգուտ չէ !։

Յարդէ թել։—Արևելեան հինաւուրց աշխարհում յարդը միայն էշերին ու ձիերին են ուտեցնում և դրա համար էլ բաւականաչափ թանգանում է ամեն տարի։ Յայտնի է որ Եւրոպացիք և Ամերիկացիք ամենագեղեցիկ գլխարկներ և զանազան առարկաներ են պատրաստում յարդից· իսկ Աւստրիայում մի նոր գիւտ են արել որ ամբողջ ոստայնական (textile-դէկստիլ) աշխարհը յուզման մէջ է գցել։ Գիւտը դեռ գաղտնի է պահուում, բայց, Ռայխնբէրգի Ամերիկեան Հիւպատոսի հաղորդագրութեան համաձայն, յարդը մի լոյծ հեղուկի վերածելու յաջողել են, որի վրայ % 20 մի ուրիշ բաղադրութիւն աւելացնելով մաքուր յարդեայ թել են քաշում ինչպէս այդ անում են բամբակից, բրդից, կանեփից, մետաքսից։ Այլն։ Էկսպէրտները հաստատում են, որ այս նոր թելը ամուր, նուրբ և դիմացկուն է, ինչպէս ոստայնանկութեան մէջ գործածած բոլոր միւս տեսակի թելերը, իսկ ծանրութիւնը % 40. նուազ է քան այդ թելերը, որով յարդեայ թելով պատրաստած կերպասեղէնները չափազանց թեթև պէտք է լինին, իսկ նրանց արժէքն էլ իհարկէ կիսով չափ էժան է նստում։ Հետևաբար շուտով յարդեայ գլխարկների հետ պիտի ունենանք նաև յարդէ հանդերձներ էժան ու դիմացկուն և թեթև։

Ագ. թրգմ. Միհր. Բաղասարեան

ՓՈՔՐԻԿ ՖԷԼԵՏՈՆ

ՄԵՐ ՍՐՏԱՑԱՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

—

Զարմանալի բան . . . .

Երեք տարին մի անգամ Թաւրիզի մի փարա մարդկանց ազգասիրութիւնը թունդ բռնում է։ Այն էլ երբ.—Հոգաբարձական ընտրութեան ժամանակ. երանի՞ թէ ամեն օր հոգաբարձական ընտրութիւն լինի, որպէս զի սրանց ազգասիրական ջիղը, ազգային թասիբը վերակենդանանայ։

Հոգաբարձական ընտրութիւն . . .

Օ՜, դա այնպիսի ցնցող կոչ է, որ երեխաներն անգամ իրենց օրօրոցում հանգիստ չեն մնում, ուզում են դուրս սողալ պարուրից և ներկայ գտնուել այդ ընտրական պայքարին և կամ նոյն իսկ ընտրուել։

Թող կորչեն միրուքներն ու բեխերը։

Կեցցէ՛ անաբեսութիւնը. . . .

Բայց ներողութիւն, ուզում էի ասել անմօրոսութիւնը, անբեխութիւնը, բայց դուրս եկաւ անաբեսութիւն. ասենք թէ այդպիսիների համար անաբեսութիւն, անբեխութիւն հոմանիշ բառեր են . . .

Ուստի ձեռքի տակովն անցած հասարակ. գնումէ ժողովասրահը... անարգելու,խայտառակել այն հոգաբարձութիւնը, որ երեք տարի շարունակ բարեխղճօրէն ձրիապէս վարել է իր պաշտօնը։ Ամեն մէկը իր դասը սերտում է մտքումը։ Նախագահը բաց է անում ժողովը։ Մի ձայն.—ներկայ հոգաբարձակ. կազմը իր վրայ դրած պարտականութիւնը վատ է կատարել, որովհետև դրամագլուխը տեղից չէ շարժել *), իսկ դա ներկայ լուսաւոր դարիս հասկացողութեամբ յետադիմութիւն է։ Չէ՞ որ շարժումը կեանք է։ Ա՛յ քեզ օրինակ Լիլաւան. կեցցէ՛ նա. ապա իսկի թողել են որ դրամագլուխը անդուկը մտնի։ Մեր գրպանները ծակ խօ չէ՞ն։ Այդ տեսակէտից ես առաջարկում եմ Արամեան դպրոցի դրամագլուխը յանձնել Լիլաւայի դպրոցի վարչութեան։ Դլուխս կտամ եթէ մի տարուց աւելի նա տեղը պառկած մնայ։

Բ. ձայն. Անպատճառ զեղծումներ կան. առաջարկում եմ քննիչ յանձնաժողով ընտրել և հաշիւները քննել։

Գ. ձայն առաջարկում եմ որ հոգաբարձութիւնը այս րոպէիս հաշիւ տայ մեզ.

Դ. ձայն հաշիւ ենք ուզում։

Եւ այդպէս անվերջ։

Հոգաբարձուներից մէկը դառնալով ժողովականներին։

—Դուք էք ինձ հոգաբարձու ընտրել.

—Ո՛չ

—Ծանօթ էք դպրոցիս նիւթական վիճակի հետ.

—Ո՛չ

—Երբ և իցէ հետաքրքրուե՞լ էք դպրոցով·

—Ո՛չ.

—Այս երեք տարուայ ընթացքում գոնէ մի ա՛նգամ ձեզանից մէկը յաճախել է դպրոց.

—Ո՛չ.

—Հաւաքուած ժողովականներդ երեխայ ունե՞ք դպրոցում.

—Ո՛չ.

Դպրոցը նիւթական աննախանձելի դրութեան մէջ է- կօգնե՞ք

—Ո՛չ.

Անմօրուս հասարակութիւնը վայրկեան մի լրջութեան սահմանը մտաւ. մինչև անգամ լսուեցին ձայներ՝ ճի՞շտ է ճի՞շտ է.

Իսկ եթէ մէկը հարցնէր.

—Ի՞նչ է ձեր փոռացաւը.

—Մի՞թէ չգիտէք. վերցնել Արամեան դպրոցը ,,շտուրմով'' դրամագլուխը արևի տակ դնել, մեր մարդկանց տեղաւորել, մեր գրպանների ծակերը կարկատել և անվերջ բազմակէտեր. . .

Աղուէսն ու իր պոչը առակը ակամայ մարդ յիշում է։ Պոչատ աղուէսը իր ընկերներին խորհուրդ է տալիս դէն շպրտել պոչերը, որպէս մի աւելորդ բան. իսկ մի ծեր ու փորձուած աղուէս ասում է՝

—Ա՛յ ծակամուտ Թոռիս Թոռը, բա քանի՞ որ տեղն էր պոչդ, ինչո՞ւ չարիր դու էդ կոչդ

Լու

(Շարունակելի)

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽԸ ԹՂԹԻ ՎՐԱՅ *)

—

Ինչ որ ասացինք «Սևան» ընկերութեան վերաբերմամբ դպրոցների պարտքի վճարման հնարաւորութեան՝ առթիւ, նոյնը կարելի է համարձակ ասել նաև պարոնայք Եղբարք Միքայէլեանների մասին։ Վերջինները ևս կատարելապէս հնարաւորութիւն ունէին թէ նախքան մնանկանալը և թէ մնանկութիւնից յետոյ՝ վճարելու դպրոցներիս ունեցած պարտքը, դրանում կասկած չի կարող լինել։

Կասկած չի կարող լինել նաև այն մասին, որ մնանկացած «Սևան» ընկերութեան անդամները նոյնպէս և պարոնայք եղբարք Միքայէլեանները մնանկանալուց յետոյ դարձան աւելի վստահելի (օթարար), ապացոյցների կարիք չենք զգում, որովհետև փաստը Թաւրիզեցիների աչքի առաջ է՝ մնանկանալուց մինչև այսօր ու երևի ապագայում ևս։

Թէպէտ մեր նախորդ յօդուածով խոստացել էինք տալ «Սևան» ընկերութեան անդամների և պրք. եղբարք Միքայէլեանների արդի կացութեան մասին մանրամասն տեղեկութիւններ, սակայն աւելորդ ենք համարում երկար մանրամասնութիւնների մէջ մտնել, մանաւանդ որ բոլոր Թաւրիզեցիներին քաջ յայտնի է նրանցից շատերի ներկայ յաջող դրութիւնը, իսկ թէ յաջողութեան մէջ լինելով հանդերձ, ի՞նչպէս է որ չեն յիշում իրենց պարտականութիւնը, այդ չափազանց նուրբ հարց է-չարժէ շօշափել այստեղ։ բաւականանանք յօդուածիս սկզբում յիշատակուածով և վերջակէտ դնենք, գուցէ մի օր կզարթնի այդ պարոնների խիղճը և կզգան, որ պարտականութիւն և հրամայական պարտականութիւն ունեն կատարելու դպրոցներիս հանդէպ. յոռետես չլինենք և սպասենք ու սպասենք...

«Սևան» ընկերութեան և Եղբ. Միքայէլեանների մնանկութեան հարցում մի բան շատ հետաքրքիր է։ Որքան մենք գիտենք և այդպէս էլ է, երբ մնանկանում է առևտրական մի հիմնարկութիւն եթէ մարմնաւոր իշխանութիւը չի միջամտում, գոնէ պատատէրերին ներկայացնում է ընկերութեան հաշուեշիռը և յայտնում՝ թէ իւրաքանչիւր պարտատէր իր պահանջի դիմաց ի՞նչքան պիտի ստանայ կամ քանի՞ տոկոսը, և եթէ պարտատէրերը համաձայնութեան են գալիս, ստանում են իրենց հասանելիքը և դրանով վերջանում է հարցը, եթէ մնանկութիւնը կեղծ չէ, այլ իրական. իսկ եթէ պարտատէրերը չեն համաձայնում, իրաւունք ունեն երբ և ո՞րտեղ յարմար համարեն պահանջելու իրենց պահանջը։ Այդպէս պատահեց տարիներից ի վեր մնանկացած «Արաքս» ընկերութեան անդամ Պ. Գասպար Մհ. Ածատր, հետ որ վաղուց իվեր գործում է իր համար առանձին։ Պարտատէրերից մէկը-Ռահիմ աղան-բռնեց Պ. Մհտի։ Աստուածատրեանի օձիքից՝ իբրև «Արաքս» ընկերութեան անդամի և պահանջեց մարմնաւոր իշխանութեան միջոցով իր պահանջը ու ստացաւ։ Նոյնպէս իրաւունք ունին վարուելու Արամեան և Ս. Անայեան, Հայկազեան-Թամարեան դպրոցների հոգաբարձութիւնները և Թաւրիզի Հայուհ բար. Միաց. Ընկ. Վարչութիւնը։

Սակայն, որքան մենք գիտենք այդպիսի բան տեղի չունեցաւ «Սևանի» և Եղբ. Միքայէլեանների մնանկութեան խնդրում։ Վերջինները իրենց գործը փոխադրեցին Թէհրան և իւրաքանչիւր պարտատէրերին տուել ու տալիս են մի շատ հեշտ ու կարճ պատասխան, որ «առաքութիւն» չի վերացնում, «Մեր հաշիւները Թէհրան, վզարէթ խարըջումն են, այնտեղից պահանջէք, մեզ կապ չունի»։ Ինչով բացատրել այդ տարօրինակ երևոյթը-չգիտենք, միայն իրականութիւնն այն է, որ հաշիւները չեն փակուել և պարտատէրերին որևէ բան յայտնի չի, թէ ինչքան պիտի ըստանան իրենք իրենց պահանջի դիմաց. կամ, գուցէ՞ բոլոր պարտատէրերը գոհացումն են ստացել, մնացել են միայն ազգային հիմնարկութիւնները, այդ էլ չգիտենք։ Իրականութիւնն այն է, որ «Սևան»

*) Դրամագլուխը շարժել, ըստ Նոր հասկացողութեան, նշանակում է՝ ի չիք դարձնել կամ շգիացնել։

«Միտք»-ի անցեալ համարում սպրդել է մի խոշոր սխալ. յիշուած է որ մնանկացած «Արարատ» և «Արաքս» ընկերութիւնները և այլն. «Արարատ»-ը պիտի լինի «Արամեան»։ «Արարատ» ընկերութիւնը ներկայումս գոյութիւն ունի և գործում է շատ. յաջողութեամբ. իրէպ՝ նախորդ յօդուածում տպագրուածի Աբրահամ բէկ Դոլուխանեանի պարտքի առթիւ գրուած էր «որ հաւանական է ծրագրուի և կըվճարուի», պիտի լինի «որ հաւանական է կյարգուի և կվճարուի։ Ծ. Հղ.

1) Տես «Միտք» № 13

ընկերութեան անդամները և պրն. Եղբայրք Միքայէլեաններ,ը ազգային հաստատութիւններին պարտ են բաւական խոշոր ու կլորիկ գումարներ և թէպէտ հնարաւորութիւն ունեն վճարելու (եթէ ոչ միանուագ, գէթ մաս-մաս) բայց չեն վճարում...: Մենք վերջացրինք «Արամեան» դպրոցի դրամագլխի քննութիւնը և մանրամասն ներկայացրինք հասարակութեան իր դպրոցների նիւթական դրութիւնը, նա և այն՝ թէ ում մօտ են դպրոցի դրամները և թէ հնարաւոր է թղթի վրայից հնչիւն դրամի վերածել թէ ոչ: Մենք, իբրև հասարակութեան մի անդամը, կատարեցինք մեր պարտականութիւնը, մամուլի միջոցով պարզելով հասարակութեան առաջ դպրոցներիս նիւթական իրական պարտքերը: Տ. Կարեան

(Շարունակելի)

9/22 Ապրիլ Սպահան

ՎԵՐՋԱՊԷՍ

Վերջապէս.... Այվատեան եպիսկոպոսը Ն.-Ջուղան ազատեց իր ներկայութիւնից, կամ՝ ինչպէս այստեղ են ասում՝ շնորհը պակսեցրեց: Նրան պահանջել են Էջմիածնից. ափսոս որ շատ ուշ: Բայց չէ՞ որ «լաւ է ուշ, քան երբէք»: Այս էլ մի ողորմութիւն է Ջուղայի համար: Դէ, չէ՞ որ Էջմիածնում «գործեր» շատ կան և ամեն ինչ «օրէնքով» է կատարւում:

Այդ ամենը լաւ: Բայց նստակեաց կեանքը զուարճասէր Այվատեանին մաղձոտ էր դարձրել: Քրիստոսի աշակերտի սիրտը մաղձով լցուել էր, թափւում էր: Եւ թափուեց: Թափուեց եկեղեցու սեղանի վրայ: Բանից դուրս եկաւ, որ ինչպէս Գէորգ IV Կաթողիկոսին մատնում էին ռուսաց կառավարութեան, ասելով՝ թէ նա թնդանօթներ է բերել Կովկաս, այնպէս էլ իրան՝ Այվատեանին են մատնել Ջուղայից ռուսաց կառավ., թէ նա ռուս. լեզուն չի մտցնում հայ դպրոցներում: Մատնէլ...են հետաքրքիր է, թէ ինչու այդ թայֆայականները միշտ զառանցում են, թէ իրանց իւրաքանչիւր քայլափոխը մատնում է, ամեն տեղ և ամենքից մատնուել ու մատնուել... իւրաքանչիւր ոչընչութիւն, բաւական է որ թայֆայական հայ լինի, այնքան նշանաւոր ոմն է երևակայում իրան, որ կարծում է, թէ ամեն մարդ զբաղուած է իրանով: Այվատեանի մատնութեան կամ մատնուելու խնդիրը հետևեալն է. Սֆահանի ռուսաց հանգուցեալ հիւպատոս Բօգօեավլէնսկին (մի ստորասէր, մանաւանդ հայասէր անձնաւորութիւն որի նման ազնիւները շատ սակաւ են պատահում). մի օր դիմում է Այվատեանին, թէ ցանկալի կլինէր ռուսաց լեզուն մտցնել Ն.-Ջուղայի դպրոցների ծրագրի մէջ, որովհետև Ջուղայում կան մարդիկ, որոնք Ռուսաստանի հետ վաճառականական յարաբերութիւններում մէջ են, բայց լեզուն չիմանալը նրանց համար դժուարութիւններ է ստեղծում. գոնէ նրանց զաւակները կսովորեն ռուսերէն: Թարգմանը ես էի: Այվատեանը պատճառաբանեց, թէ դպրոցները փող չունեն, որպէսզի նոր ուսուցչի վարձ տան... Հիւպատոսն ասաց, որ եթէ այդ տարին աւանդուի ռուսաց լեզու, միւս տարուանից ինքը կհոգայ նիւթականի մասին (նա առաջարկում էր ռուսերէնը մտցնել ոչ թէ իբրև պարտադիր առարկայ, այլ կամաւոր). միւս կողմից հիւպատոսը խնդրեց ինձ՝ իբրև ազգային դպրոցների ուսուցչի՝ ծրագրից դուրս, կէսօրից յետոյ, ձրի դասաւանդել ցանկացողներին: Ես համաձայնեցի: Այվատեանի առարկութեան առիթը վերացած էր. մնում էր նրան կամ մերժել հիւպատոսի առաջարկը, կամ ընդունել: Բայց տաճկամոլ Այվատեանը... Թոյլ տա՞յ, որ ռուսերէնն աւանդուի այն դպրոցներում, որոնց տէրն ու տնօրէնըն ինքն է... իսկ մերժել էլ չէր կարողանում. արևելեան քաղաքավարութեան դէմ կլինէր այդ. և նա խոստացաւ հիւպատոսին, որ նրա խնդիրը կ'կատարէ:

(Շարունակելի)

Ա. Աքայեանց

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Հակառակ Արամեան դպրոցի հոգաբարձութեան առարկութեան, առանց նոյն մարմնի նախազեկուցման և ինչպէս լսեցինք, հակառակ նաև թեմ. խորհրդի մի անդամի անհամաձայնութեան, սրբազան առաջնորդը, ուսումնական տարին չլրացած և ակտը չտուած, յայտարարութիւն էր տուել Ղալա թաղի ծխականներին, որ վերջիններս Մայիս 27-ին ժողովի գան թատերասրահ՝ ընտրելու քննիչ յանձնախումբ հոգաբարձութեան հաշիւները քննելու համար:

Նոյն ժողովը կայացաւ կանչուած օրը, սակայն օրինական թիւ չունենալով, որոշուեց կանչել երկրորդ ժողով՝ քննիչ յանձնախմբի համար:

Ծատուր խան Միրփէնջի մօտ ծախւում են Հայ-Ֆրանս. Ռուս-Հայ. Անգլ-Հայ. Հայ-Անգլ. Պարսկ.-Անգլ-բառարաններ, 3 հատ ընտիր՝ ատլասներ, Եւրոպական պետերի և կայսերական ընտանիքների, տեսարանների իւղաներկ և այլ ձևի նկարներ:

Մայիս 31-ին առաջնորդարան յայտնեցին, որ Քէյվանը քանդող Քաբիմ խանը փախել է Ղարադաղ:

Յունիս 1-ին, Արամեան դպրոցի թատերասրահում տեղի ունեցաւ նոյն դպրոցի ուսումնական և տնտեսական մասի լիակատար հաշուետուութիւնը: Մի շաբաթ առաջ հաշուեքննիչ պահանջող ,,գիտակից''-ները այդ օրը չկային: Ե՞րբ կվերջանայ հայ կեանքում հասարակական փարիսեցիութիւնը:

Մեզ հաղորդում են, որ թուրքերը Դուխարդանի 3 խալվար տարածութեամբ հանգստարանը տիրապետել և բոստան են դարձրել: Չգիտենք ո՞ր և ո՞րքան աւերակի ու կորստի մասին խօսենք:

Քաղաքիս փողոցները, Շուջաէդ-Դովլի հրամանով, ամեն օր մաքրւում են. բոլոր փողոցներում դրուած են լապտերներ:

Ամսոյս 3-ի համար տրուած է հրաւէր Ղալայի ծխականների II հասարակական ժողովի մասին, ուր պիտի ընտրուեն քննիչներ և լինին նախախորհրդակցութիւններ յետոյ կայանալիք հոգաբարձական ընտրութեան համար: Սպասելի է որ Ղալացիք ցոյց տան ջերմ վերաբերմունք դէպի իրենց դպրոցի ճակատագիրը:

Մայիս 27-ին, ժամը 5-ին Արամեան դպրոցի թատերասրահում տեղի ունեցաւ «ՄՇԱԿԻ»-ի 40-ամեայ յոբելեանը, որ ձեռնարկել էին տիկիններ Սբուհի Ամատունին և Հելէն Ժօրժ: Մանրամասնութիւնները յաջորդով:

Նոյն շաբթում, նոյն թատերասրահում, տեղի ունեցաւ Ղալայի մանկապարտէզի ամավերջի հանդէսը: Հանդիսին ներկայ էր սրբազան առաջնորդը:

Մայիս 29-ին կաթոլիկների Սարբէ Բէօռ դպրոցում տեղի է ունեցել պտրգևաբաշխութեան հանդէս: Կար շատ ընտիր հասարակութիւն ներկայ էր ռուսաց փոխ. հիւպատոսն իր ընտանիքով, ներկայ էր նաև Սարդար Ռաշիդը:

Մայիս 27-ին տեղի է ունեցել Լիլաւայի Հայկազեան-Թամարեան դպրոցների սոյն ուսումնական տարուայ հաշուետուութիւնը: Տեսուչ Կ. Պիօնեանը յայտնել է այս անգամ մի նոր գաղափար, որ է «միացնել Ղալայի և Լիլաւայի թաղային դպրոցները»: Այս «գիւտը» երևան է գալիս շատ յարմար մոմենտին.— երբ այդ դպրոցներից մէկում փող կայ, իսկ միւսում՝ ոչ, զի հայրերի դիզածները «կրթուած», «ազատամիտ», «ժողովրդական շահերի պաշտպանութեամբ տոչորուած և տագորուած» որդիք ազգասիրաբար կերան և սնանկացրին ազաների շինած ու ապահոված այդ դպրոցները:

Սակայն կարծում ենք Ղալայի հայ հասարակութիւնը այնքան պարզամիտ չի լինի, որ այդպիսի «նոր» գաղափարներին ընդ առաջ գնայ, վտանգելով իր դպրոցների ապագան:

Ղալան պիտի հասկանայ այդ նոր փորձացաւութեան ձայնը ինչու է բարձրանում այժմ Լիլաւայից, ամեն ինչ ձեռնմխել դարձնողների այդ ամբոխից:

Լիլաւայում առ ի չգոյէ հոգաբարձութեան, տնտեսական հաշուետուութիւն չի եղել: Մեր այն փարիսեցիները, որոնք 40 խոշորացոյցներով են նայում Ղալայի հոգաբարձութեան կազմին, արարքին և ժամանակը լրանալուն, այս դէպքում Զաքարեայի դերն են ստանձնել:

—

«ՄԻՏՔ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՄԵԾԱՊԱՏԻՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ներկայ տարուայ յունվարից «ՄՇԱԿ» լրագիրը թեւակոխեց իւր գոյութեան և գործունէութեան քառասունևմիերորդ տարին: Այսպիսի երկարատև կեանք հազուագիւտ է հայոց պարբերական մամուլի մէջ, իսկ մեր, Ռուսահայոց մէջ՝ միակ օրինակն է մինչև այսօր. ուստի ,,ՄՇԱԿԸ'' ամենայն իրաւամբ համարուելու է Ռուսահայոց աւագագոյն լրագիրը:

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ հիմնելով ,,ՄՇԱԿԸ'' գծեց նրա համար մի հաստատուն ծրագիր, որին հետևեց ինքը ամբողջ քսան տարի, մինչև իւր կեանքի վերջը, իսկ նրանից յետոյ՝ ներկայ խմբագրական կազմը: Այդ ծրագրին էր՝ ղեկավարել հայ հասարակական միտքը յառաջադիմական ուղղութեամբ, սերմանել ժամանակակից գաղափարներ, որոնցով միայն հայ ժողովուրդը պիտի կարողանայ տեղ գրաւել և ապրել յառաջադէմ ազգերի շրջբերում:

Զնայելով բազմատեսակ ներքին և արտաքին խոչընդոտներին և աննպաստ պայմաններին, որոնց մէջ ապրում և գործում է հայ լրագրութիւնը, ,,ՄՇԱԿԸ'' միայն եղաւ Ռուսահայոց բազմաթիւ լրագիրների մէջ, որ կարողացաւ այսքան տարիներ իւր գոյութիւնը պահպանել, առանց իւր ծրագրից շեղուելու: Այս անուրանալի իրողութիւնը անհերքելի ապացոյց է, որ ,,ՄՇԱԿԸ'' եղել է այն լրագիրը, որ ճիշտ կերպով ըմբռնել է հայ հասարակութեան իսկական կարիքները, հաւատարմութեամբ ծառայել է նրանց և ուղիղ է տարել հասարակական մտքի ղեկը, առանց տատանուելու, առանց սառեցնող հողմերից ընդարմանալու, առանց փոթորիկներից խորտակուելու:

Գնահատել այն առողջամիտ, հասարակութեան ճշմարիտ շահերին համապատասխան, հեռատես ուղղութիւնը, որ բռնել է ,,ՄՇԱԿԸ'' ամենակարևոր ազգային խնդիրների քննութեան ժամանակ. Թուել այն բարոյական և նիւթական օգնութիւնները, որ ցոյց է տուել նա կրթական, բարեգործական հիմնարկութիւններին, ժողովրդական խոշոր աղէտների-սովի, հրկիզութեան, կոտորածների ժամանակ-անհնարին է մի թռուցիկ տեսութեան մէջ: Սրա համար պէտք կլինէր վերայիշել հայոց պատմութեան վերջին՝ տագնապալից, երկունքով բռնուած, յոյսերով և յուսախաբութեամբ լի քառասնամեակը: Այդ պատմութիւնը վկայում է, որ ,,ՄՇԱԿԸ'' միշտ ապրել է ժողովրդի հետ և ժողով. համար ցաւակից է եղել նրա ցաւերին, խնդակից նրա ուրախութիւններին, բայց միշտ գիտակից այն ծանր պատասխանատուութեան, որ կրում էր ինքը՝ իբրև ղեկավար հասարակական մտքի:

Եւ այժմ, երբ «ՄՇԱԿԸ» բոլորեց իւր կեանքի ու գործունէութեան քառասնամեակը, ժամանակն է, որ հայ հասարակութիւնը տօնէ իւր աւագագոյն լրագրի, իւր կենսական շահերի պաշտպան հաւատարիմ մշակի այս հազուագիւտ յոբելեանը, խօսքով ու գործով արտայայտէ իւր յարգանքն ու համակրութիւնը դէպի այս լրագիրը և նրա ազնիւ ու չարքաշ գործունէութիւնը:

Ներքոյ ստորագրեալներս, որ մեր վրայ նախաձեռնութիւն ենք վերցրել կազմակերպելու «ՄՇԱԿ» լրագրի քառասնամեայ գոյութեան և գործունէութեան Յոբելեանը՝ սրանով դիմում ենք «ՄՇԱԿԻ» բազմաթիւ բարեկամներին ու համակրողներին, դիմում ենք ամբողջ հայ հասարակութեանը Ռուսաստանում և այլ տեղեր, հրաւիրելով մասնակցել այս Յոբելեանին որ ոչ միայն «ՄՇԱԿԻ» տօնն է, այլ և նրան սիրող ու պահպանող գիտակից հայ հասարակութեան: Յանձնաժողովս սիրում է յուսալ, թէ ինքը հասարակութեան ջերմ բաղձանքներին թարգման է հանդիսանում, յայտնելով որ այս Յոբելեանի առիթով որոշել է կազմել մի յատուկ ֆոնդ, առանձին կազմակերպութեան կարգադրութեան տակ, որի նպատակն է լինելու ապահովել «ՄՇԱԿԻ» յարատև հրատարակութիւնը, միաժամանակ միջոց տալով նրան զարգանալու ներքուստ և արտաքուստ, ընդարձակելու ծրագիրը և այլն:

Յանձնաժողովս համոզուած է, որ հայ հասարակութիւնը իւր միահամուռ համակրութեան այսպիսի արտայայտութեամբ աւելի ևս ոյժ կը տայ այն անկախ ու անվեհեր գործունէութեան, որ ունեցել է «ՄՇԱԿԸ» քառասուն տարի շարունակ:

Յանձնաժողովս լիայոյս է, որ հայ հասարակութիւնը համակրութեամբ կընդունէ իւր այս առաջարկութիւնը և յօժարակամ նուէրներով կը նպաստէ նրա իրագործմանը:

Յոբելեանական տօնը կատարուելու է ներկայ տարուայ Մայիս 26-ին, շաբաթ օրը:

Յոբելեանին վերաբերեալ գրագրութիւններն ու դիմումները ուղղելու է Յանձնաժողովիս Բիւրոյի Նախագահ Յովհաննէս Սպենդիարեանին (Ивану Семеновичу Спендiарову, Евангуловская, 8, Тифлисъ). իսկ դրամական առաքումներն ուղղելու է Յանձնաժողովիս փոխ-նախագահ Արշակ Միլեանին [Аркадiю Назаровичу Милову, Тифлисъ).

Նախագահ Յանձնաժողովի՝ Գաբրիէլ Սունդուկեան (Դրամատուրգ)

Փոխ-նախագահներ:
- Յով. Սպենդիարեան (Երգուեալ-հաւատարմ.)
- Արշակ Միլեան (Թիֆլ. վաճառ. աւագ եւ բորս. կոմիտ. նախագ.)
- Բագրատ Նաւասարդեան (Բժշկապետ)

Քարտուղար Յանձնաժողովի՝ Ստեփան Մալխասեանց (Տեսուչ Յովնանեան դպրոցի)

Պատուաւոր անդամ՝ Յովհաննէս Գասպարեան (Բժշկապետ)

Անդամներ:
- Ալիխանեան Յովհաննէս (Իրաւագէտ եւ նախկ. հաշտ. դատաւոր)
- Աթաբէկեան Միքայէլ (Երդուեալ հաւատարմատար)
- Առաքելեան Բարսեղ (Մէջչանների աւագ)
- Աւան-Իւզբաշեան Դաւիթ (Կալուածատէր)
- Աֆրիկեան Խաչատուր (Առեւտրական)
- Աւետիսեան Հայրապետ (Առեւտրական)
- Աղաջանեան Միքայէլ (Բժշկապետ)
- Բաղդասարեան Արամ (Առեւտրական]
- Բաշինջաղեան Գեւորգ [Նկարիչ)
- Բաբայեան Արշակ [Ինժիներ]
- Եարալեան Գրիգոր (Ինժիներ]
- Եղեկեան Աւետիք (Գրականագէտ)
- Էնֆիաջեան Արտաշէս [Գործարանատէր)
- Ծատուրեան Եփրեմ [Առեւտրական)
- Խաչատրեան Խաչատուր [Խմբագիր ,, Тиф. лист." լրագրի)
- Խարազեան Սարգիս
- Խունունց Մնացական [Նաւթարդիւնաբերող)
- Կիւլպենկեան Սերովբ [Կիւլպենկ. Առեւտր. Տան պետ)
- Կիրակոսեան Գրիգոր [Ինժներ]
- Ղորղանեան Յովսէփ (Երդուեալ հաւատարմատար)
- Մանթաշեան Լեւոն (Մանթաշեան Արդիւնաբ. Տան. պետ)
- Մամուլեան Զաքար [П-րդ փոխ. վարկի ընկ. դիրեկտոր]
- Մանուէլեան Ստեփան (Հաշուապահական կուրսերի տեսուչ.]
- Մայսուրեան Սամսոն (Բժշկապետ)
- Մարտիրոսեան Մնացական (տպարանատէր)
- Մելքումեան Սարգիս (П-րդ փոխ. վարկի ընկ. դիրեկտոր)
- Նախշունեան Գրիգոր (Առեւտրական)
- Նազարեան Տիգրան (Խմբագիր «Աղբիւր-Տարազ» հանդէսների)
- Շահպարոնեան Սամուէլ (Բժշկապետ)
- Շխեան Արտաշէս (Բժշկապետ)
- Ջաղէթեան Ալէքսանդր (Արդիւնաբերող)
- Ստեփանեան Կարապետ (Բժշկական-առողջապահ. վերատեսուչ Թիֆլիս քաղաքի)
- Սարուխանեան Առաքել (Գրականագէտ, դիրեկտոր Մանթաշեան Արդիւնաբ. Տան)
- Սուլխանեան Ստեփան (Ռուսական շոգենաւ. և առեւտր. ընկ. գլխաւոր գործակալ Թիֆլիսում)
- Սուլխանեան Մինաս (Առեւտրական)
- Սերովբեան Կարապետ (Արհեստաւորների աւագ)
- Ստեփանեան Ալէքսանդր
- Քալանթարեան Պետրոս (Երդ.-հաւատ.)
- Օսէփեան Յովսէփ (Առեւտրական)
- Փիրալեան Յարութիւն (Գիւղատնտես. և պետական տնայնա-գործ. կոմիտէտի կառավ.) *]

Թիֆլիս, Յունվար, 1912

*] Ցաւում ենք որ այս կոչը մեզ ուշ ուղարկելու պատճառով մեր թերթում տըպւում է «Մշակ»-ի Յոբելեանական օրից ուշ.

Խմբ.

ՊՕՍՏԱՐԿՂ

--

Թաւրիզ Պ. Քիզարօյին. — Ձեր «Արջք օրհասականք ընդ վախճանել շնչոյն հզօրագոյնս կուլին» այժմէական յօդուածի տպումը նիւթերի շատութեան պատճառով յետաձգուեց։

Թաւրիզի մեր բաժանորդներին որոնք ապառիկ ունեն.-պարոններ, չորս ամիսը լրանալու վրայ է և դեռ 14 ղրանի չնչին գումարի աննշան բաժանորդագինը դուք չէք վճարել։ 100 տարի է մեր մէջ մամուլ գոյութիւն ունի և գիտէք որ բաժնեգինը կանխիկ է վճարւում։ Որքան սպասենք և քանի անգամ գանձողին ուղարկենք դրամի և էլի լսենք ձեր պատասխանը. «վաղը եկէք» կամ «յետոյ կուղարկենք»։ Մեզնից թղթավաճառ, տպարանատէր, ցրիչ, փոստ և այլն կանխիկ և առանց ժամանակ տալու առնում են, մենք էլ ոչ ապահով վաճառական ենք և ոչ էլ դրամատէր, մենք սպասում ենք ձեր չնչին բաժնեգներին։ Պարտաճանաչութիւնը ազնիւ բան է։ Նոյնը աստւմ ենք և մեր օտար քաղաքների պ.պ. բաժանորդներին, որոնց դրամները վաղուց և հրամայաբար օր առաջ արգէն մեզ հասած պիտի լինէին։

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՆ ԵՆ

Մարաղում պ. Յ. Տր. Վարդանեանը
Ուրմիում « Ա. Միրզաջանեանը
Աստառում « Ա. Բժշկեանը
Ռէշտում « Մ. Պատմագրեանը
Էնզէլիում « Բ. Մկրտչեանը
Թէհրանում « Պ. Միքայէլեանը
Սպահանում « Ն. Դաւթեանը։

Խնդրում ենք մեր բաժանորդներին շտապեն իրենց բաժնեգները յանձնել վերոյիշեալներին, բայց առաջ մեզ հասցնելու համար։

Խմբագիր—հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԵԼ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ

բուժարան (լէչէբնիցա)

Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բժշկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6

ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

MAGAZINS DE PARIS-TABRIZ.

NOUVELLES BLOUSES POUR DAME
JUPES, JUPONS EN SOIE, TAFFETAS ET LAINE
COUPON POUR BLOUSES
ECHARPES EN SOIE POUR DAME
Echarpes Egyptiennes
CHEMISES CELLULAIRES POUR MESSIEURS

,,МАГАЗИНЪ ПАРИЖЪ"
PROPRIETAIRE J. D. THOMASSIAN

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ

ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ

ՇԱԼԵՐ ԵՒ ՓԷՇԵՐ

ԵՒ ՆՈՐ ԿՏՈՐՆԵՐ

Նոյնպէս տերմօսներ, որոնք տաք կամ սառը ջուրը 24 ժամ նոյն տեմպերատիւրում պահելու յատկութիւն ունին։

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

ԳԱՐՈՒՆ

(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Նոր ստացել են ՄԵՏԱՔՍԵԱՑ ԸՆՏԻՐ ԲԼՈՒԶԱՑՈՒՆԵՐ, ՍՊԻՏԱԿ ԼԱՒ ՔԹԱՆՆԵՐ, տղամարդկանց ԿՈՃՏ ԳԼԽԱՐԿՆԵՐ, ԵՐԿՈՒՏԱԿ ՎԱՐՏԻՏՆԻԿՆԵՐ, ճաշակաւոր ԳՈՂՏՈՒԿՆԵՐ, անձեռոցիկներ, երեխաների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ։ Ընդունելով ԵՂԲԱՐՔ ՍԷՅԼԱՆՈՎՆԵՐԻ ՌՈՒՍԻՏՐԱԿԱՆ ՏԱՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պապիրոսների պապիրոսների և ծխախոտների պատւէրները։ Պատւէրներ կարելի է տալ 50000 հատից սկսած. իբրև կանխավճար վերցնում ենք 100-ին 15 0|0 գները հաշւում ենք գործարանի հաշւով, ցանկացողները կարող են վերցնել պրէյսկուրանտ։

ԹԱՒՐԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Վերսկսուել է երթևեկ և գիշերօթիկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր առ. ժ. 10—12։

Այն աղքատները, որոնք պ. Բայլարբէգուց վկայական կունենան, կը բժշկուին ձրի։

Հիւանդանոցի կառավարիչ բժիշկ

Վահան Գէորգեան

مریضخانهٔ تبریز

این روزها شروع کرده‌ایم بمعالجهٔ هر قسم مرضای مقیم و غیر مقیم را هر روز پذیرای خواهد شد در مریضخانه از دو ساعت بظهر مانده الی ظهر و مرضای بی‌بضاعت هرگاه از بکلربگی کری نوشته بیاورند مقیم و غیر مقیم مجانی به کمال مواظبت واهتمام معالجه خواهد شد

مدیر مریضخانه دکتر واهان گویرکیان

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стаціонарный пріемъ больныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.
Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно

Завѣдующій больницей
докторъ Ваганъ Геворковъ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

,,ՓՈՐՁ"

Գիտական, Գրական, Գեղարուեստական և ժողովրդական երկամսեայ հանդէս, բովանդակութիւնը այլ համարով։ բաժանեգինն է տարեկան
Պարսկաստանի համար . . . . 15 ղրան
Ռուսաստան ,, ... 4 րուբլի

Հարկաւոր են գործակալներ. հասցէ Rédaction «Portz» 5, Rue Fonténile-5 Montpelliér (France)

Խմբ. Հրատարակիչ՝
Ս. Տէր Բաղդասարեան